



ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## ՅԻՒԿԻ «ԴԻՎԱՆ»Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, «ՖԻՒԿ. ԴԻՎԱՆ»

(Աշխատույթուն՝ պսակված Ռուսական Գիտությունների ակադեմիայի կողմից)  
Հրատարակույթուն Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Մելքոնյան  
հիմնադրամի

§ 1. «Ֆրիկի Դիվան»ը — էջմիածնի միաբանության անդամ Տիրայր արքեպիսկոպոս Մելքոն-Մուշկամբարյանի (Տիր-Հովհաննիսյանի) տասնյակ տարիների տքնաչան աշխատանքի արդյունքն է։ Փաստորեն առաջին անգամն է, որ լույս է տեսնում միջնադարյան մեր ականավոր տաղերգութիւնիկի ամրողական ստեղծագործությունը՝ բնագրով, գիտական համեմատություններով։ և ընդարձակ ծանոթագրություններով, եթե չհաշվենք պրոֆ. Մ. Մկրտչյանի և ե. Թորոսյանի 1941 թվականին հրատարակած «Ֆրիկի բանասեղծություններ»ի ժողովածուն, որի հիմքը նույնպես Տիրայր արքեպիսկոպոսի ներկա աշխատության սեպիր օրինակն է հանդիսացել։

Տիրայր արքեպիսկոպոսի շնորհակալ այս գործը արժանավայր կարող են զնահատել միայն նրանք, ովքեր ծանոթ են գիտական-համեմատական տեքստեր կազմելու հոգեմաշ աշխատանքի հետ և ովքեր գիտեն։ թե որքան աչքի լույս պիտի թափել մեր խունացած ձեռագրերի վրա՝ նման մի դորժ ստեղծելու համար։

Ֆրիկի տաղերը հավաքելու ուղղությամբ Տիրայր արքեպիսկոպոսի կատարած պըրպառմներն ու որոնումները երկար տարիների պատմություն ունեն։ նա այդ աշխատանքը սկսել է 1907 թվականից։ Ֆրիկի ստեղ-

ծագործության մեջ հասած փշրանքները հավաքելու համար հրատարակիչը պտաել է աշխարհի բոլոր ծայրերը, եղել է գրեթե բոլոր խոշոր մատենադարաններում, համարել է Ֆրիկի տաղերը, համեմատել, ուսումնասիւել և պատրաստել հրատարակության։ Աշխատանքն ավարտել է 1912 թվականին և ներկայացներել Ռուսական Կայսերական գիտությունների ակադեմիային՝ տպագրության խնդրանքով։ Ակադեմիայի գիտական խորհուրդը այդ աշխատությունն ընդունել է բարձր գնահատականութ և իր վրա վերցրել հրատարակության ողջ ծախսերը։ Տպագրությունն սկսվել է, սկզայն Համաշխարհային առաջին պատերազմի ծանր օրերին՝ ընդհատվել և մնացել անավարտ վիճակում։ Այնուհետև տպագրության համար պատրաստ Ֆրիկի «Դիվան»ը սպասել է ևս 35 տարի, մինչև որ 1952 թվականին լույս է ընծայվել Հայ Բարեգործական Ընդհանուր Միության կողմից։

Որպես Հայ մատենագրությամբ վրադակող մասնագետ, չենք կարող վշտով շարձանագրել, որ Ֆրիկի «Դիվան»ի հրատարակության տարիների այս քաշը ունի խոսում է մի ցավալի երեսումի մասին։ որ Մայր Հայունիքից հեռու, պետական հովանավորությունից զորկ Սփյուռքի մեր հայագետները, նախանձելի վիճակում չեն, որ արտաւահմանի մեր

որոշ համայնքներում դեռ հասարակական կարծիք չէ ստեղծվել այն մասին, որ մեր անցյալի մշակույթի ուսումնասիրում ու գիտության սեփականություն դարձնելը—առանձին հայագետների պատվի գործը չէ՝ միայն, այլ մեր ժողովրդի պատվի գործն ընդհանրապես, ուստի և հայագիտական նման աշխատությունների հրատարակման համար հարկավոր է ցուցաբերել սրտացալ վերաբերմունք:

Տիրայր արքեպիսկոպոսի Ֆրիկի «Դիվանը» կազմված է երեք մասից՝ ա) Քննական ուսումնասիրություն (էջ 1—238), բ) Տաղերի դիտական-համեմատական տեխնոլոգիան (էջ 243—500) և գ) Հավելված-ծանոթագրություններ (էջ 503—621): Վերջում ունի բառարան, անունների ցանկ (էջ 624—715) և նկարներ: Ամբողջ «Դիվան»ը բաղկացած է 756 մեծագիր էջերից:

Մենք նպատակ չունենք այժմ գրախոսել Տիրայր արքեպիսկոպոսի աշխատությունը: Այս շնորհակալ գործի նկատմամբ մեր վերաբերմունքը լիովին դրական է: Մեր ցանկությունն է կանգ առնել Ֆրիկի անձնավորության և նրա ստեղծագործության հետ կապված վիճելի մի քանի հարցերի վրա, և մեր ձեռքի տակ եղած նյութերի հիման վրա փորձել որոշ լրացումներ և ճշտումներ անել:

Տ 2. Էջմիածնի նախկին Մատենագրանում Ֆրիկի տաղեր պարունակող ձեռագրերից հրատարակչին հայտնի են եղել միայն երեք ձեռագիր, որոնց տարրերակները և օգտագործել է «Դիվան»ում: Այդ ձեռագրերը հետեւալներն են. № 238 (որ ներկայում ունի Հայկական ՍՍՌ Պետական մատենագրանի 7707 համարը), № 281 (որ ներկայում ունի 3081 համարը) և № 679 (որ ներկայում ունի 3595 համարը):

Տիրայր արքեպիսկոպոսի էջմիածնի մատենագրանում աշխատած ժամանակ, ինչպես երեսում է, գոյություն չի ունեցել ձեռագրաց թեմատիկ ցուցակ, և նա հնարավորություն չի ունեցել ծանոթանալու Ֆրիկի տաղերը պարունակող կարևոր ձեռագրերի հետ: Նա ի վիճակի չի եղել ծանոթանալու նմանապես Հայկական ՍՍՌ Պետական մատենագրանում կենտրոնացված մյուս ձեռագրական ժողովածուների հետ, ուր կան Ֆրիկի տաղերի որոշ ընդօրինակություններ:

Հայկական ՍՍՌ Պետական մատենագրանի թեմատիկ ցուցակում, Ֆրիկի անունով, այժմ՝ գրանցված են ո՞չ թե երեք, այլ քառասուն ընդօրինակություն, որոնց համառոտ բիբլիոգրաֆիան բերում ենք մեր հոգածիք հավելվածում: Անշուշտ, եթե Տիրայր արքեպիսկոպոսը ի վիճակի գտնվեր օգտվե-

լու սովետական մեր մատենագրանի ընդօրինակություններից, Ֆրիկի տաղերի հրատարակությունն անհամեմատ ավելի անթերի կլիներ:

Տ 3. Ֆրիկի «Դիվան»ի մեջ մտել են տաղերուկին վերագրվող հիսունմեկ տաղերը, ինչպես և նրա ստեղծագործության հետ կապված, բայց նրան չպատկանող ինը այլ տաղեր ևս ծավալի է, որ Ֆրիկի տաղաշարթից դուրս է մնացել «Լամի» լենդ ձեզլ բան մի խօսել» տաղը: Այս տաղը բերում ենք մեր հոգածիք հավելվածում:

Տ 4. Տիրայր արքեպիսկոպոսը Ֆրիկի «Դիվան»ի մեջ զետեղել է ընդարձակ ուսումնագրություն՝ նվիրված Ֆրիկի անձնավորությանն ու նրա ստեղծագործությանը: Նրա արծարծած հարցերից ուշագրության արժանի է Ֆրիկի անվան պարզաբանությունը—ի՞նչ անուն է այդ: Իր ուսումնասիրության մեջ Տիրայր արքեպիսկոպոսը բերում է հայագիտության մեջ հայտնաված բոլոր վարկածները, ինչպես և իր անձնական ենթադրությունները և եղանակածում, որ Ֆրիկ անունը տաղերուկի իսկական անունը չէ, այլ՝ գրական:

Տիրայր արքեպիսկոպոսի բերած կարծիքներից մեջ ամենինից հավանականը—«Փըռիկ», «Փըռփոկիկ», պատող, թափառը իմաստուկությունն է թվում:

«Ձրիկ»ը որպես «Թափառական» իմաստուկությունից գործածած ունենք մեր մատենագրության մեջ, և հրատարակիչը մեջ է բերում այն. «Վորն որ կարդայ» թող լիշազատախու Գրէ Աւոն: Զէս տողեր մրոտեց, Շէնըց Օսմանի «Ֆոնիկ Խազար» (Ֆրիկի «Դիվան», էջ 94), այսինքն՝ տողերը գրեց թափառական Ղաղարը:

Ի դեպ, «Փոփիկ» բառը «Թափառական» իմաստուկ մտել է հանգուցյալ պրոֆ. Ա. Մալիսայանցի «Հայերն բացարարական բառարան»ում. «Փոփիկ,— կարդավ ենք այնտեղ, — ճոռակուկ պտույտ եկող, հոլ» (Դ. Հատոր, էջ 629):

Ֆրիկ անունով անձնավորություն, 1517թվականից հշշված է Հայկական ՍՍՌ Պետական մատենագրանի № 1047 ձեռագրի հիշատակարանում: Հակոբ գրիշը խնդրում է հիշել ձեռագրի պատվիրատու մահուսի Սահակին, որ «ստացաւ զասի հալալ լըլովակէ... լիշատակ իւրն և ծնաւալացն իւրոց Ֆրիկն, և կողակիցն, և քուրուն...» (թ. 234ա):

Տ 5. Տիրայր արքեպիսկոպոսն իր ուսումնասիրության մեջ մի շարք փաստերի հիման

1. Ֆրիկի այս տաղը հրատարակել է Ա. Մնացականյանը Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի 1946թ. № 2-3-ում, էջ 79-84:

վրա ապացուցում է, որ Ֆրիկը աշխարհական անձնափորություն է եղել: Նրա հիմնական կովանն այս հարցում Վենետիկի Միհիթարյանների մատենադարանի № 1330 ձեռագրի պարունակած «Խ' մ սիրա, վատին մի՛ լսե՛» տաղի խորագիրն է հանդիսանում, որը, ըստ հարատարակչի տեղեկության, գրված է կարմրադեղով և հազիվ կարդացվում է: «Այլ տաղ վասն բարեգործութեան մարդկան ի Ֆրիկէ աշխարհականէ ասացեալ»: Հայկական ՍՍԾ Պետական մատենադարանի № 7707 ձեռագրում ընդօրինակված՝ «Ե անաւրէն և անառակ երիտասարդ» տաղի խորագրում Ֆրիկը նույնպես հիշված է որպես աշխարհական՝ «Ֆրիկ նարաւար աշխարհականէ» (թ. 272 ա): Այս վերնադիրը նույնպես գալիս է հաստատելու Ֆրիկի աշխարհական լինելու փաստը:

Անշուշտ չափազանցովյուն է բանասերներից ոմանց հայտնած կարծիքն այն մասին, որ իր Ֆրիկը «կամկածանքի է ենթարկում «Աստվածաշնչում» նկարագրված աշխարհի և մարդկանց արարագործովթյունը», «Ֆրիկը չի հավատում Աղամ-Եվայի լեզենդին» և այլն: Այդ սխալը ժամանակին մատնացուց է արել պրոֆ. Մ. Արելյանը (տե՛ս «Հայոց հին գրականության պատմություն», 2-րդ գիրք, էջ 268):— Ֆրիկին աթեհստ համարելը, ինչ խոսք, որ անհեթեթություն է:

§ 6. Տիրայր արքեպիսկոպոսը ենթադրում է, որ Հ. Ալիշանի ձեռագրերից հավաքած տեղեկության մեջ՝ Ֆրիկն էր «որդի Թագվօշին», եղանակորորդի Դոգնային», երգել է «ի վերայ իւր մեղացն որ ի վանս բանահրաց» (տե՛ս «Յուշիկը Հայրեննեց», էջ 125): Թագվոշը պիտի եղած լինի Ղարաբաղում ընդհանրացած Թագուշ անոնը, իսկ Թագուշը եղել է Ֆրիկի ո՛չ թե հայրը, այլ՝ մայրը:

Հարատարակչի այս ենթադրությունը հիմնավորված չէ: Եթե ճիշտ է Հ. Ալիշանի բերած տեղեկությունը՝ Ֆրիկի մասին, ապա այնտեղ Թագվոշը հիշված է որպես Ֆրիկի հայրը և ոչ մայրը. «Ֆրիկն էր որդի Թագվոշին»:

Բերված Թագվոշ անոնը, իշարկե, անսովոր է, այլպիսի անոն չգիտե նույնպես պրոֆ. Հ. Աճառյանի անձնանումների բառարանը: Մեր կարծիքով, «Թագվօշ» անուր աղավաղումը պիտի լինի «Թագվոր» անվան, իսկ Թագվոր անունով՝ մի քանի այր մարդիկ հիշված են պրոֆ. Հ. Աճառյանի Անձնանումների բառարանում (տե՛ս «Հայոց անձնանումների բառարան», հատոր Բ, էջ 243—244):

§ 7. Համոզեցուցիչ է հարատարակչի եղբակացությունը Ֆրիկի խեղճ, թափառական վի-

ճակի մասին: Հայտնի է, որ Ֆրիկի ողջ ունեցվածքը ավար էին վերցրել մոնղոլները: Այդ մասին տաղերգուն իր «Հանց մեծամեծ խորհուրդ արի...» տաղի մեջ հետևյալն է ակնարկում:

«Զինչ Տէրն երեւ՝ հերիք շածի, ա՛յլ մեծութեան սիրու ունէի, ժողովեցի շատ մի բարի՝ ըռպակ արի զինք թաթարի...»:

(Դիվան, տաղ Ը, տող 9—10): Ավելին, բանաստեղծը հարկի զիմաց գրավ է դրել իր որդուն և պարագի տակ է ընկել: Այդ մասին նա իր մի տաղում դառնացած գանգատվում է.

«Ո՛չ տուն, ո՛չ տեղ ունիմ, կու խոցիմ ի յանձաւատնուն, Կասեն, թէ խըմէ զինի, որ լինիս դու մի պահ ի քուն, Ուակայ ի պարտուց յահուն, կու դողամ զինչ ունի ի քամուն, Դըրի զիմ որդին գըրաւ, ուատի ճուղապ գընալուն, Միթէ թագաւորն երկնից՝ նա բերէ զիմ որդին ի տուն»:

(Դիվան, տաղ Ժէ, տող 6—10): Շատ ծանր է անցել Ֆրիկի ժերության շրջանը. նա կորցրել է իր բոլոր հարազատներին, զրկվել իր տուն ու տեղից և թափառական կյանք վարել.

«Զի գիտեմ թ՛ո՞ւ մեռանիմ, ո՛չ զոք ունիմ, որ թաղէ զիս, Ո՛չ ունիմ տեղ հանգստեան, ո՛չ խնդացել եմ յիմ որդիս, Ո՛չ եղբայր, և ո՛չ զոք ունիմ, որ աւաղէ, ափսոսայ զիս, Ո՛չ ծըլիմ, ո՛չ բուսանիմ, դերդ զալըննածած սերմ եմ գերիս...»:

(Դիվան, տաղ Դ, տող 9—12): Զարմանալի չէ, որ այս վիճակում նա հուսահատության մեջ է ընկնում և դառնացած նշում:

«Ես ան հաւերում էի, որ գետինըն կուտ թըռչէի, երկնաւքն անցնէի, թէ սիրուն՝ ակնատ ընկնէի, Ակնատն ի ծովուն կըղփին լարած էր՝ և սպառէի, Ամէն հաւ ուտօքն ինձեր, ես ուտաւքու ու թես աւելի»:

(Դիվան, տաղ ԽԴ, տող 23—26): Հրատարակչի բերած փաստերը այս ամենի մասին ճիշտ են: Մենք չենք ուզում միայն համաձայնվել հրատարակչի հետ Ֆրիկի ծննդավայրի հարցում, Մեր կարծիքով, Ֆրիկը ո՛չ թե Արևելյան Հայաստանից է, այլ Արևմտյան: Ֆրիկի զարարադցի լինելու մասին արդեն խոսք լինել չել կացող: Բայտ ուրում, «Թանասիրաց վանքը», որի հետ, ըստ

տեղեկությունների, կապված է եղել Ֆրիկը, շպիտի անվիճելի համարել Գլաձորի դպրոցը. «Բանասիրաց» են կոչվել նաև Կիլիկիայի Խորին Անապատը և գրչության մի քանի առ դպրոցներ:

§ 8. Մեր կարծիքով, ճիշտ չէ հրատարակչի «մասա» բառին տված բացատրությունը: Նա «մասա» բառը համադրելով «մասաչի» բառին, գտնում է, որ առաջինը նշանակում է «հայ», իսկ երկրորդը՝ «ոչ հայ» (1) (Դիվան, էջ 102). Տիրայր արքեպիսկոպոսն իր կազմած «Դիվան»ի բառարանուած բացատրել է. «Մասա»—պայմանական խոսք կամ գաղտնի լեզվի արտահայտություն, որ նշանակում է ՀԱՅ, աղքակից, արյունակից, ցեղակից» (էջ 662): «Մասասչիք — ծածկալեզու բառ, որ նշանակում է ոչ-ՀԱՅ, օտար, թշնամի» (էջ 663):

Մեղ թվում է, որ «մասա» բառին տրված այս բացատրությունը ճիշտ չէ: Մեր կարծիքով այս բառը պարսկերեն առանձ (մասա) բառն է, որ նշանակում է գործ, ձեռնարկ, նպատակադրում: Ֆրիկն այստեղ ուզում է ասել՝ «Օրերս անցան իմ ձեռնարկների, գործերի, իմ երազանքի հետ միասին»:

Ինչ վերաբերում է «մասաչի» բառին, ապա այդ ունի «գործակալ» իմաստը, հավանական է մոնղոլական հարկեր հավաքող գործակալ: Մասաս—գործ, մասասչի—գործակալ (ինչպես՝ «բաղ»—«բաղմանչի», «գուրքան»—«գուրքանչի» և այլն): Այս իմաստով է գործածված «մասասչիք» բառը Ֆրիկի ուկան Արդուն դանին և Բոլղային» տաղի մեջ.

«Գեմ չի մընաց լեռներ ու դաշտք,  
Որ մասասչիքն չկոխեցին»:

(Դիվան, տաղ 1b, տող 67—68):

Այսինքն՝

Զմնաց այլևս լեռ ու դաշտ,  
Որ [մոնղոլ] գործակալները ոտք շղնեին:  
Կամ՝  
«Անպա զայս այլ կամիմ ասել,  
Զինչ մասասչիքն գործեցին»:

(Դիվան, տաղ 1b, տող 114—115):

Այսինքն՝

«Ճանկանում եմ այն էլ պատմել,  
Թե ինչ արացին [մոնղոլ] գործակալները»:  
§ 9. Ֆրիկի վերև բերված տաղում հիշված «մասա» բառը, մեր կարծիքով, ո՛չ մի կապ չունի Ֆրիկին վերագրվող «Յիշէ զրանն Աւետարանին» տաղի տնագույն տառերից կազմվող «Յովլասափ մազագի հետ: Ժամանակին իրավացի է եղել նորայր Բյուզանդացին, որ այդ տաղը համարել է Հովլասափ Սեբաստոցնը և նախազգուշացրել է Հրատարակչին՝ շմտցնելու այն Ֆրիկի «Դիվան»ի մեջ: Ավելորդ չենք համարում նշել: որ այդ

տաղը Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 2672 ձեռագրում (որն ընդօրինակված է 1607 թվականին) հիշված է Հովլասափ Սեբաստոցու անունով՝ «Պալատան ապաշխարութեան Սեբաստոցի Յովլասափին»:— Յիշէ զրանն Աւետարանին...» (թ. 348ա):

§ 10. Դիվանում ենք համաձայնել «Դիվան»ի համապատակը հետ՝ Ֆրիկի «Դիվան»ի հԴ տաղի մեջ հիշված Հարգա անվան տված բացատրության հարցում: Նա այդ անունը համարում է Կիլիկիայի Հարգա հաղաքի անունը (նորագույն Հազընը) և այդ անվան հիշատակության հիման վրա փորձում է ապացուցել, որ Ֆրիկը լինելով Արևելյան Հայաստանից, մշտական չի մնացել և յանտեղ, այլ տարագրվելով եկել է Կիլիկիա և շատ տարիներ ապրել Հարգա քաղաքում (Դիվան, էջ 224):

Այդ նույն տեսակետը պաշտպանել են նաև պրոֆ. Մ. Մկրտչյանը՝ Ֆրիկի «Բանաստեղծություններ»ի առաջարանում (էջ 11) և բանասեր Ա. Ղանալանյանը՝ իր «Ֆրիկի կյանքն ու ստեղծագործությունները» հոդվածով: Վերջինս այդ մասին գրում է. «Ֆրիկը բավական երկար ապրել է Կիլիկիայի պատմական Հարգա (այժմյան Հազըն) քաղաքում, որի մասնակի հնագույն բառ նրա «Յաղաք փոշիմանութեան» տաղից (տե՛ս «Ֆրիկ», ժողովածուած, Երևան, 1937 թ., էջ 99): Միայն պրոֆ. Մ. Արելյանն է, որ կասկածելի է նկատել այդ անվան բացատրությունը. «Հարգա անունը փորձել են նույնացնել Կիլիկիայի «Հարգա» տեղանվան հետ՝ գրել է նա, — բայց այդ դեռ կարելի չէ հաստատ համարել: Սակայն պրոֆ. Մ. Արելյանը այդ անվան հիման վրա մի այլ տեսակետ է զարգացրել ճիշտ համարելով այդ բառի «Հարգա» փոփոխակը, այն համարում է Աղձնիքի նշանակուր կենտրոն Հազըն (տե՛ս Մ. Արելյան, «Հարգա հիմ գրականության պատմություն», Երևան, 1946 թ., էջ 251):

Ֆրիկի մոտ այդ անունը գործ է ածիկել նրա հետեւյալ պարբերության մեջ:

«Ծատ մի դատեցալ, եղբարք, ի Հարգայ ես շատ մի տարի, Ասցի թ՛ իմ ջանաւս առնեմ մեծութիւն՝ առանց հրամանի»:

(Դիվան, տաղ իԴ, տող 9—10):  
Եթե ճիշտ է, որ Ֆրիկը թափառականի ցուպ վերցրած եկել էր Հարգա քաղաքը, և եկել է գործած որդին որոնելու, այն դեպքում անիմաստ է դառնում Ֆրիկի «Չանաւըս առնեմ մեծութիւն» արտահայտությունը, քանի որ թափառական Ֆրիկը Հարգա քաղաքում հաղիկ թե ձգտեր մեծության:

Մեր կարծիքով, «Հարգա»... բառին տված այս բացատրությունը բացահայտ թիւրի-

մացության արդյունք է: Այդ բառի ձիշտ ձեռն է ոչ թե Հարգա, այլ հարգա, որը տալիս են օրսիորդի համալսարանի, Բողոքան դրատան F. 16 Արտ. Ms. և Լոնդոնի Ֆրիտանական թանգարանի օր. 2622 Ֆրիկի ձեռագրեր՝ «Շատ մի դատեցալ, եղբարք, ի հարզայ ևս շատ մի տարի»: «Հարզա բառը հատուկ անուն չէ, այլ՝ հասարակ, փոխառված պարակերենից և ունի «ունայն», «ապարդյուն» իմաստը: Պրոֆ. Բ. Միլլերի «Պարսկերեն—ուստերեն» բառարանում այդ բառը թարգմանված է «Ճշկ հարզ» տեղում, հարացնայի, պստօյ» (տե՛ս Բ. Վ. Միլլեր, «Պերենցո-ռուսեական հայության առաջնային բառեր» 1953 թ., էտր. 592): Վերև բերված տողերում Ֆրիկը պարզապես ուզում է ասել, որ «Ես շատ տարիներ, եղբայր, ապարդյուն աշխատեցի, իգոր աշխատեցի», և ո՞չ թե «Հարզա բառարում աշխատեցի»:

Այս բառին տված նոր բացատրությամբ մենք չենք ցանկանում ընդհանրապես մերժել Ֆրիկի Կրիկյան Հայաստանում գտնվելու փաստը, սակայն գտնում ենք, որ Ֆրիկի Հարզա բառարում գտնվելու փաստը անհիմն է:

§ 11. Տիրայր արքեպիսկոպոսն իր ուսումնասիրության մեջ այն կարծիքն է հայտնում, որ Ֆրիկը գրել-կարդալ չի իմացել: «Թերեւս (ժամանակակիցների մեջ) կային և այնպիսիները, — գրում է նա, — որոնք անձնապես ճանաչելով Ֆրիկին և շատ լավ իմանալով երա անուսումն լինելի ու գրակարգաց իսկ շլինելը (ընդգծումը մերն է: — Ա. Ա.), կասկածանքով էին վերաբերվում նորա բնական քանաքարի արդյունք քնարի առատ և առատարան արտադրություններին...» (Դիվան, էջ 18):

Քանասերներից ոմանք կրկնել են այս կարծիքը — Ֆրիկին համարել են անուա, անկիրթ: Ստոցվում է, որ միշին դարերում սոցիալական մոտիվներով գրող մենք միայն մի տաղերգու ենք ունեցել, այն էլ անգրագետ: Այս տեսակետի հետ չի կարելի համաձայնվել ո՞չ այն պատճառով, որ այն ստվեր է ձգում անցյալի մեր զարգացած մշակույթի վրա, այլ որ փաստական տեսակետից ձիշտ չէ: Այս սխալին ժամանակին շատ իրավացի անդրադարձել է հանգուցյալ պրոֆ. Մ. Արեգյանը: — Ֆրիկի ծանոթ լինելը Աստվածաշնչին և նրանից հմտորեն մեջբերումներ անելը, նրա տաղերի մեջ մշակված արվեստը և այլն — միանգամայն հակառակն են ապացուցում: Ֆրիկը ո՞չ միայն գրագետ, այլ իր ժամանակի ամենազարգացած, կարդացած մարդկանցից մեկն է եղել, այնքան զարգացած, որ ըմբռնել է ժամանակի սոցիալական հակադրությունները և կարողացել է այն արտահայտել իր տաղերում:

Ֆրիկն անգրագետ համարող բանասերները, սովորաբար, մատնացուց են անում բանաստեղծի հետևյալ խոսքերը.

«Ֆրիկն ի՞նչ հող է կամ մոխիր, որ հանց գոհար բան շարէ նա, Ո՞չ ծառայել վարդապետի, ո՞չ կարդացել աւրիկ մի նա, Ո՞չ ի հօրէ առել միրաթ, այլ յԱստուծոյ տուած նորա. Նա հ՞րք կարէ հանց բան ասել, ով որ կարդայ աւրհնէ զնա: (Դիվան, տաղ է, տող 69—72):

Բայց այստեղ Ֆրիկի խոսքը վերաբերում է ո՞չ թե կրթություն չունենալուն, այլ ուսուցչի և հող մոտ սիստեմատիկ կրթություն չատանալուն: Սակայն ինքնակրթությամբ Ֆրիկը կարող էր շատ մեծ արդյունքների հասնել: Բացի այդ, Ֆրիկի այս տողերում մենք նկատում ենք համեստության հետ և որոշ հետնանք՝ ուղղված գրչության դպրոցներում սովորած «գիտամաների այն հերովանքներին՝ թի Ֆրիկը ովհնացես կարող է այնպիսի լավ բաներ գրել», որ նրանք հավանան: Ասում ենք՝ հեղնանք, որովհետև Ֆրիկը ծանոթ էր ժամանակակից հայ տաղերգության հետ, և լավ դիտեր, որ իր ստեղծագործությունը անհամեմատ ավելի բարձր է եղածներից, ավելի է սիրված ժողովրդից, քան պաշտոնական անարյուն տաղերգությունը:

Պիտի նկատի ունենալ նաև, որ արտահայտության այդ ոճը միշնադարյան մեր գրիշների սովորական ոճն է եղել: «Ֆիշենչիք և զիս՝ տպէտս, ծոլլս, լոլլս...», — կարդալ ենք ձեռագրերի հիշատակարաններում: Նայելով հազարավոր էշերից բաղկացած ձեռագրին, արտագրության գրագիտությանը, ո՞չ ոք կարող է ասել, որ հիշատակագիր գրիշը, իրոք, ծուլլ է եղել կամ անդրագետ: Հակառակը, ձեռագրին նայելով մարդ զարմանում է զրի աշխատասիրության և վարժ գրագիտության վրա: Տարրինակ ոշինչ չկա: Այն ժամանակվա արտահայտության ոճն այդ է եղել: Ֆրիկին էլ իր ժամանակի մարդն է:

§ 12. Տիրայր արքեպիսկոպոսը Ֆրիկի գիտանատօքը, որ նրա ստեղծագործության վկում գործոցն է նկատվում, Ֆրիկինը չի համարում: այլ՝ ոմն թարսեղի: Այդ մասին նա աներկրա գրում է: «Ֆրիկին վերաբերված «Գանգատ»ը, մթան վիճման ընդ անհնազօրին Աստուծոյ վերտառությամբ տաղը, մեր կարծիքով, Ֆրիկինը չէ, ինչպես համառ կերպով պնդվում է ամենքի կողմից և ամեն պատեհությամբ: Ավելին ևս՝ «Գանգատ»ի հեղինակի անոնը ևս, բարեբախտարար, ժամանակը պահել է մեզ համար: Այդ երգի հեղինակը հայտնի է թե ովլ է — թարսեղ ոմն իմաստուն» (Դիվան, էջ 108):

Աշխատելով ապացուցել «Գանգատ»ի Ֆրիկի ստեղծագործությունը Ախնելը, նա մատնացուց է անում հետևյալ փաստելը.

ա) Ֆրիկը սովորություն ունի իր տաղերում հիշատակել իր անունը, իսկ «Գանգատ»ում այդպիսի հիշատակություն չկա:

բ) «Գանգատ»ը Ֆրիկինը լինել չի կարող, քանի որ նրա երկու ընդօրինակությունների խորագրում հեղինակ է հիշված Բարսեղը:

գ) Նույն ընդօրինակությունների տեքստում ևս Բարսեղը հիշվում է որպես «Գանգատ»ի հեղինակ:

դ) Եվ, վերջապես, «Գանգատ»ը, որոշ ձեռքբերում, վերնագրված է «Գանգատ». բայց Ֆրիկը գրեոյն: Այս վերնագրից հրատարակիլը եղածացնում է, որ ընդօրինակողը այդ տեքստը համարել է ո՛չ թե Ֆրիկինը, այլ վերցված մի ձեռագրից, որը Ֆրիկի տաղերի ժողովածուն է, իսկ այդ ժողովածուում ընդօրինակիլ կարող էին ո՛չ միայն Ֆրիկի, այլ՝ ուրիշ հեղինակների գործեր ևս:

Տիրայր արքեպիսկոպոսի բերած փաստարկները, մեր կարծիքով, հիմնավոր չեն:

Նախ՝ «Գանգատ»ը, ժողովրդի մեջ, ժամանակի մտավորական առաջադեմ շրջաններում տարածված և գնահատված մի երկ է եղել, այն խմբագրիկը և մշակիլը է մի քանի անգամ: Համեմայն զեսպ, նրա մշակող հեղինակներից երեքը, անուններով, մեզ հայտնի են՝ Ֆրիկը, Բարսեղը և Հովհաննես Սարկավագը: Եթե մենք նկատի չոմնենանք այս երեք հեղինակների յուրաքանչյուրի խառնվածքը, նրանց սիրած թեման, արտահայտվելու արվեստը և այլն, այն դեպքում մենք կոֆվարանանք ճիշտ որոշել նրա հեղինակը: Զեական մոտեցման դեպքում մենք ավելի հիմք ունենք «Գանգատ»ը վերագրելու Հովհաննես Սարկավագին, քան թե մյուս եղկու հեղինակներին: Զէ՝ որ Հովհաննես Սարկավագն ավելի վաղ է ապրել, քան Ֆրիկը և Բարսեղը (Հովհաննես Սարկավագի մահվան տարին (129), հավանական է, Ֆրիկը զեռ չէր ծնված): Զէ՝ որ «Գանգատ»ի ձեռագրերից մեկը շատ պարզ վերնագրված է: «Գանգատ» առ Քրիստո յաղագս տարբեր վիճակաց մեծատանի և աղբատի Սարկավագ Վարդապետի Ասացեալ» (Դիվան, էջ 541): Սակայն մենք գտնում ենք, որ «Գանգատ»ը Հովհաննեսի ստեղծագործությունը չէ, որովհետև նրա լեզում, ոճը, շարադրության եղանակը, բանաստեղծության ձևը միանգամայն այլ են: Անշուշա թյուրիմացությունը տեղի է ունեցել հետևյալ ձեռվ՝ Հովհաննես անունով մեկը յուրովի մշակել է «Գանգատ»ի տեքստը և իր անունը դրել նրա վրա, իսկ նրա արտագրող գրիշներից մեկը, ցանկանալով ճշտել Հովհաննեսի ո՞վ լինելը,

սիսամմամբ դրել է Սարկավագի մականունը և քաղաքացիություն տվել իր սիսալին:

Մեր կարծիքով, նույնը պիտի պատահած լինի և Բարսեղի հետ: Բոլոր դեսպերում, մենք Բարսեղին համարում ենք «Գանգատ»ի մշակող հեղինակներից մեկը: Հավանական է Բյուրիմացությունը ստեղծվել է հետևյալ ձեռվ՝ Բարսեղը «Գանգատ»ի իր մշակած տեքստում մտցրել է և իր անունը այն ձեռվ, ինչ ձեռվ հասել է մենք:

«ԱՌ, ցոյց թէ ո՞րմէ պիտանի;

Որ Բարսեղս այլ գիտուն լինի...»:

(Դիվան, Հայկելվածի տաղ Զ, տող 59—60): Իսկ ընդօրինակող գրից կարպալով այս անունը, անհրաժեշտ է համարել տաղի վերնագրում ևս դնել հեղինակի անունը՝ «Բարսեղի ուն մարդու» կամ «Բարսի ուն զիտնականի» ձեռվ: (Անվիճելի է, որ վերնագրի Բարսեղ անվան դնողը գրիչն է):

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում մենք ունենք «Բանեկ ի Ֆրիկ գրեոյն» խորագիրն ունեցող մի ձեռագրի փոքրիկ փափոխակը, որ խախտում է Տիրայր արքեպիսկոպոսի վերև բերված կովաններից մյուսը ևս: — Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 7703 ձեռագրում Ֆրիկի «Գանգատ»ը վերնագրված է՝ «Բանեկ ի Ֆրիկ գրեոյն», որից պարզ երևում է, որ ընդօրինակողն ուղեցել է ասել ո՛չ թե Ֆրիկի տաղերը պարունակող ձեռագրից՝ մի Ֆրիկ գրովն», այլ Ֆրիկի ստեղծագործություններից՝ «ի Ֆրիկ գրոցն»:

§ 13. Ո՞վ է Ֆրիկի «Գանգատ»ի Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 3595 ձեռագրի տեքստը մշակող Բարսեղը: Մեզ հավանական է թվում, որ նա լինի Կիլիկիայի Խորին կոչվող անապատի գրի Բարսեղ քահանան, որի ընդօրինակած մի ձեռագիրը, իր չափածո գեղեցիկ հիշատակարանով, մեզ է հասել և այժմ Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի սեփականությունն է կազմում (գրանցված է № 1418-ի տակ), ունի 1298 թվականի գրչություն):

Զափածո այդ հիշատակարանը, իր տեսակով, բացառիկ մի ստեղծագործություն է: Նա մեզ հասած միակ հիշատակարանն է, որի մեջ զրից անողոք և համարձակ քննադապում է իր ժամանակի քաղաքական և եկեղեցական երկու խոշոր պետերին՝ Թագավորին և կաթողիկոսին: Նա թագավորին՝ Սմբատին, Հեթումի եղբորը (1296—1298 թ. թ.) համարում է անգութ գեպի աղքատները, անողորմ գեպի վատերին՝ Թագավաճները, անփոյթ գեպի երկրի վիճակը, շահավաճառ մի անձ: Հիշատակարանում կարդում ենք:

1. Այս հիշատակարանից փոքրիկ քաղաքածներ մենք հրատարակել ենք մեր «Հայկական պալեոգրաֆիա» աշխատաթյան մեջ (էջ 178—179):

ՇԱՀ և մեղաց մերոց շարի,  
Գոլով արգել յամենայնի,  
Ի գլխոյն սկսեալ լինի,  
Եւ յարքայէն մերոյս ազգի:  
Պատահեալ անձն իմ եղելի  
Նմա յատ' զըս տէրոնի,  
Յալլակերպման աւորն մեծի,  
Զանհաստատ վարս նորա տեսի,  
Եւ անդ վայր մի ես ողբացի:  
Զի որ նմա (թագաւորին:— Ա. Ա.) հոգք  
պիտանի,

Անփոյթ առնէր յամենայնի,  
Եւ որ չէր նմա յարգի,  
Միշտ յայն փութար զի հպեսցի,  
Եկեղեցի հրկէզ լինի,  
Եւ քրիստոնեայ գերի վարի,  
Նա ո'չ ցաւ, ո'չ հոգ լինի,  
Ո'չ ի փրկե'լըն փոյթ ոնի:  
Աղքատաց անգութ լինի,  
Վտանգելոց ո'չ ողորմի,  
Շահավաճառ յաւտ լինի,  
Եւ ընդ ալլոյ բարիս շարի:  
Է զոր աշաւք իմաւք տեսի,  
Եւ որ գունկամբ ես լսեցի...»:

Հիշատակագիրը ժամանակակից կաթողիկոսին՝ Գրիգոր Անավարզեցուն (1293—1307 թ. թ.) համարում է «սոսուակասպաս», «հացկատակ», թագավորի «կամակատար», իսկ կաթողիկոսի «փրայիններին՝ Ծիրը և լկտի»:  
Թերենք այս հատածը ևս.

«Զի հայրապետն որ յիշեցի,  
Անփոյթ առնէ զեկեղեցի,  
Հաւատոյ խնամ շտանի,  
Ոչ շար կարգաց թի խել պիտի:  
Գալթակղութեան պատճու լինի,  
Զթագաւորին կամս հաճի,  
Յանդիմանել ընաւ' շատմարի,  
Զի ի փառաց մի' զրկեսցի:  
Սուտակասպասք գու արքայի,  
Եւ հացկատակը յամենայնի,  
Առաջնորդ և վարդապետ՝  
Թագաւորին կամաւք վարի,  
Յանդիմանել ոք շատմարի,  
Եւ ո'չ ի յելս բանի հայի:  
Եւ նա նոցին հետեւսցի,  
Որ կարծեցեալ սիմըն կոչի:  
Հայրապետական գահիւ պատուի,  
Եւ այլ հոգոց ընաւ' փոյթ շտանի,  
Եւ որ իւր են ընտանի,  
Լիրքը և լկտիք յամենայն[ի]...»:

Հիշատակագիրը միաժամանակ զգուշացնում է դալիք սերունդին, որ նրանք զգատանան և շպահեն նման պետք.

«Ի բազմաց սուլ որ յիշեցի,  
Փոքր վեհիցն աստ զրեցի,  
Բանիս ընթացը կընքեսցի,  
Եւ լուսութեամբ եզր կալցի:  
Զի մի' յանբաւը յառաջի,

Կամ սաստկագինըն լիշեսցի,  
Այդ զոր աստ գլորեալ լինի,  
Զկնի եկելոցդ խըրատ լինի:  
Զի թի չէաք մեք արժանի՝  
Զէաք հանդիպեալ այսմ արքայի,  
Ոչ փառամոլ առաջնորդի,  
Կամ հացկատակ վարդապետի:  
Այդ ըստ զործոց մերոց շարի՝  
Զհանդիպեցաք արանց բարի,  
Այդ զուք որ գայք ըզմեր կընի՝  
Կացէք ըզգոյզ ձերում գործի...»:

Հիշատակագիրը են նաև հիշատակարանի այն մասերը, որոնք վերաբերում են իրեն՝ Բարսեղի անձնավորութիւնը: Հիշատակարանից երեսմ է, որ Բարսեղը հայ գրչության սիրահար մեկն է.

«Զի հոգլով եմ եղելի,  
Մարմինս ցաւաւք միշտ վարակի,  
Փափագեմ ամէնս տառի՝  
Աղքատութիւնս ոչ հասանի:  
Վերծանութեան հետեւէի՝  
Նա՛ զրչութեան սէրն ստիպի,  
Քանքը զգոյր զի վարձէի՝  
Մատամբս քանի՛ ես զրէի...»:

Եվ զրչության այդ աշխատանքի ընթացքում հիշատակագիրը երբեմն հոսկեսության մեջ է ընկել.

«Յայս միշոցին անձն իմ կոծի,  
Եւ վարանի յամենայնի՝ \*  
Թի զի՞նչ աւգուտ ինձ յաս շանի,  
Թի ընթեռուկ ինձ ոչ լինի...»:  
Սակայն նկատի ունենալով որ այդ ձեռագիրը բարի հիշատակ է թողնում գալիք սերունդներին, հիշատակագիրն իրեն հուսադրում է.

«Մի յոյս միայն գերոյս թողի,  
Թի եկելոց վայել լինի:  
Զի թի այս ոչ գոյր առաջի,  
Կարծեմ սակաւ գոյր գիր յերկրի,  
Որպէս և ես վարանէի՝  
Աւա՛զ թի ընդ վայր շանս լինի:  
Եւ ամենայն որ զայս խորհի,  
Սակաւ տանի հոգք այս գործի,  
Այդ ըստ յուսոյն որ կայ առջի,  
Միշտ յաւժարեալ զիրս ոք ստասցի:  
Զի տէրունի բանն լցցի՝

Ալլոց վաստակ ալլում լինի,  
Եւ արդ ի յայս յոյսը յեցեալ՝  
Անձն իմ զերի և եղելի...»:

Մենք անհրաժեշտ համարեցինք փոքր ինչ երկար մեջբերումներ անել Բարսեղ զրչի հիշատակարանից, ցանկանալով մեր բանասերների ուշագրությունը հրավիրել մեր այս տաղանդավոր հիշատակագրի վրա, որի առաջարած սոցիալական համարձակ իրենդիրները որոշ կամուրջ են ձգում դեպի Ֆրիկի «Գանգատօք»:

Մենք չենք պնդում, որ Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 1418 ձեռադրի գրիչ Բարսեղը, անվիճելի, Ֆրիկի «Գանգատուր մշակող հեղինակն է, բայց անհավանական ևս ոչինչ չենք տեսնում: Համենայն դեպս, ցանկալի էր, որ Ֆրիկով զբաղվող մեր Հայագետները անուշադությամբ շանցնեին Բարսեղ գրիչ կողքով, որպես նրա «Գանգատուր մշակողի և նրա հետեւողությամբ սոցիալական հակասությունները տեսնողի և բնադրատողի»:

§ 14. Մանր այս դիտողություններից և լուսադրություններից հետո, մենք ուզում ենք նորից վերադառնալ Տիրայր արքեպիսկոպոսի Ֆրիկի «Դիվանի» հրատարակության արժեքա-

վորմանը և այդ առթիվ ուզում ենք հիշել մեր հանճարեղ տաղերգություն՝ Ֆրիկի հետևյալ տողերը.

«Զիմ միարս լողնորդ արի, և ի ծովու յատակն իջուցի, Վասն ա'յն մարդարտին համար, որ ծովու յատակըն լինիա»:

(Դիվան, տաղ ի՞ն, առող 55—56): Ֆրիկի «Դիվան»ի հրատարակիչը, իր սիրած տաղերգություն օրինակով, մեր մատենադրական ծովի հատակից լուս աշխարհ է հանել հնության փոշով պատաժ այդ մարդարիտը, և հանել է ո՛չ թե մեկը, այլ տասնյակներ, այդ մարդարիտներից նա մի գեղեցիկ շարան է կազմել և նրանով զարդարել միջնադարյան հայ մատենադրությունը:

## ՀԱՄԱՌԱԾ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴՐԱՐԱՆԻ ԶԵՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՂԱՌ ՖՐԻԿԻ ՏԱՂԵՐԻ\*

№ 33 (3), թ. 140ր. «Ֆորիկան ասացեալ է ողբ:— Ով որ սիրէ կուք ու կըթխայ...»: Ունի 17-րդ դարի գրչություն: Գրիշն է Հովասափի որդի Հովհաննեսը: (Դիվան, տաղ ԺԲ):

№ 1661 (1981), թ. 109ա—110ա. անխռագիր: «Յառաջն որ յաշխարհս եկի՝ հանց ըստակ ի վին հայելի...»: Ընդօրինակել է Պետրոս արքեղան 1594 թվականին, հավանական է Բոփատում: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 1736 (1766), թ. 2ր. շղրս տող միայն. «Ճորժամ շարին ի յետ քակի...»: Ընդօրինակված է 17-րդ դարում: (Դիվան, տաղ ԽԷ):

№ 2127 (2139), թ. 132ա—133ա. «Ողբ վասն անձին և վասն հոգոյ:— Յառաջն որ յաշխարհս եկի...»: Ընդօրինակել է Հովասափի 17-րդ դարում: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 2236 (2253), թ. 447ր—448ա. «Ողբ հնջելոց ասացեալ է:— Յառաջն որ յաշխարհս եկի...»: Ընդօրինակել է Արքահամ գրիշը 18-րդ դարում, հավանական է Երուսաղեմում: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 2394, թ. 176ա—179ա. «Տաղ վասն Արքամյ:— Կ'ուզե՞ս որ աղիկ կինաս...»: Ընդօրինակված է 17-րդ դարում: (Դիվան, տաղ ԽԴ):

№ 2482, թ. 123ա—124ա. անխորագիր: «Յառաջն որ աշխարհս եկի...»: 16—17-րդ դարի ընդօրինակություն է: (Դիվան, տաղ ԽԶ):

\* Ներկա բիբլիոգրաֆիան վերցրել ենք Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի թեմատիկ ցուցակից:

№ 2676, թ. 177ա—178ա. «Լասն բախտին և տալեխին ասացեալ է ի Ֆոկայ...»: Թերի: 18-րդ դարի ընդօրինակություն է: (Դիվան, տաղ ԽԷ):

Նույն ձեռագրում, թ. 178ր—180ա. «Ֆրկան ասացեալ է:— Պատգամն, որ երես Աստուած...»: (Դիվան, տաղ ԽԱ):

Նույն ձեռագրում, թ. 185ա—ր. «Ողբ վասն հոգոյ և մարմնի:— Յառաջն որ յաշխարհս եկի...»: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 2939, թ. 440ա—ր. «Ողբ ի վերայ մարդկային ազգին՝ թէ ի՞նչ այլ և այլ գալիք կայ բարի և շար:— Երբ խաչեցար վասն աշխարհ...»: Ընդօրինակել է Մարտիրոս Ղբիմեցին 1799 թվականին նոր Նախիջևանում: (Դիվան, տաղ Հավելվածի է):

Նույն ձեռագրում, թ. 94ա—95ա. «Եթրատ ոգոյշան Խաչառուր Կեչառեցոյ ասացեալ կամ Ֆրրիկի: Ֆրիկի տաղն սկսում է «Կամիմ բան մի խօսել...»: (Դիվանի մեջ չի մտել):

№ 3050 (1135), թ. 269ա—ր. «Տաղ Ֆրկան է ասացեալ:— Ե՞ր շես երթար...»: Ընդօրինակել է Ղուկաս սարկավագը 1592 թվականին Կարինում: (Դիվան, տաղ ԽԷ):

№ 3081 (281), թ. 137ր—139ա. «Ֆրկան ասացեալ զայս տաղ— Կ'ուզե՞ս որ աղիկ կենաս...»: Ընդօրինակել է Զաքարիա արքան 1617 թվականին Կաֆայում: (Դիվան, տաղ ԽԳ):

Նույն ձեռագրում, թ. 139ա—140ր. «Ֆրիկի ի նոյն բանն ասացեալ վասն ողորմութեան:— Ցիշէ զրանն Աւետարանին...»: (Դիվան, տաղ ՄԱ):

№ 3179 (96), թ. 65ա. «Խորին Ֆրկան ասցեալ է խորոց սրահց:— Աններելի հուր վառեցար...»: Ընդօրինակել է Հովհաննես արեղան 1449 թվականին: (Դիվան, տաղ թ):

№ 3228 (603), թ. 14բ. «Այլ տաղ ի վերայ նոզոյ:— Յառաջն որ աշխարհս եկի...»: Վերը պահաւ: 19-րդ դարի ընդօրինակություն է: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 3527 (704), թ. 133ա—134ա. «Տաղ Ֆրիկայ է ասացեալ վասն կենաց քափակի:— Մարդուն որ տալեին ու պուրճն...»: 15-րդ դարի ընդօրինակություն է: (Դիվան, տաղ Իթ):

№ 3595 (679), թ. 106ա—109ա. «Քարտի սմեմն մարդոյ կոի եղեալ ընդ Աստուծոյ. կու մեղադրէ և յետոյ Ուու մեղլայ Աստուծոյ:— Աստուած արդար և յիրափի...»: (Վերնագիրը սկզբում գրված է եղել Կարմրադեղով, հետագայում խունացել է և մենքը սկ մելանով վերականգնել է այն): Զեռագիրը 15-րդ դարի գրչություն ունի: Գրիչն է Հովսեփը (թ. 109ա): (Դիվան, տաղ Հավելվածի ԽԶ):

№ 4296, թ. 76բ—77ա. անխորագիր: «Յառաջն որ յաշխարհս եկի...»: Ընդօրինակված է 1824—1833 թվականներին: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 4370, թ. 1բ. «Ճ ծնունդ Սուրբ Կուտին» տաղի հատվածը, որ մնացել է կտրված կես թերթի վրա: 16-րդ դարի ընդօրինակություն է: (Դիվան, տաղ Ե, տող 65-ից):

№ 5024 (297), թ. 138բ. Հատված Ճ վերայ շարլիխից: Ընդօրինակել է Կարապետ Իրեցը 1633 թվականին: (Դիվան, տաղ Իէ):

№ 5623 (954), թ. 180ա—182ա. անխորագիր: «Յառաջն որ աշխարհս եկի...»: Ընդօրինակել է Հոհան գրիշը 1663 թվականին: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 5985 (1393), թ. 116բ. «Գրրկայ ասացեալ:— Պատգամն որ երես Աստուած...»: 17-րդ դարի ընդօրինակություն է: (Դիվան, տաղ ԽԱ):

№ 6974 (1439), թ. 153բ—154ա. անխորագիր: «Յառաջն որ աշխարհս եկի...»: Ընդօրինակել է Գալուստ գրիշը 1553 թվականին: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 7508, թ. 403բ—404ա. «Այլ ողը ննջեցելոց:— Յառաջն որ յաշխարհս եկի...»: Ընդօրինակել է Ավետիք դարիը 1670 թվականին: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 7703 (408), թ. 76ա—81բ. «Բանի ի Ֆրիկ գրոցն:— Աստուած արդար և յիրա-

փ...»: Ընդօրինակված է 1750 թվականին: (Դիվան, տաղ Հավելվածի Զ):

Նույն ձեռագրում, թ. 81բ—83ա. անսորագիր: «Յառաջն որ տալեին և պուրճն ի ֆալաքը չէ բղորդած...»: (Դիվան, տաղ Իթ):

№ 7707 (383), թ. 231ա—232ա. անխորագիր: «Յառաջն որ աշխարհս եկի...»: Ընդօրինակել են Ամիթ և Զաքարիա գրիչները 1611 թվականին: (Դիվան, տաղ ԽԶ):

Նույն ձեռագրում, թ. 239ա—240ա. «Եւրաս ողջան և պիտանի:— Իմ սիրու, ուու վատ մի՛ առներ...»: (Դիվան, տաղ ԻԳ):

Նույն ձեռագրում, թ. 272ա—277ա. «Ֆիւիկ ճարտար աշխարհականի:— Է՛ անաւրէն և անքարիշտ...»: (Դիվան, տաղ Ժ):

№ 7714 (385), թ. 136բ—138ա. «Տաղ Ֆրիկի ասացեալ:— Է՛ր չես երթար ի միտա ի վայր...»: Ընդօրինակված է 1714 թվականին: (Դիվան, տաղ ԽԵ):

№ 7732, թ. 453ա—բ. «Այլ ողը ննջեցելոց:— Յառաջն որ աշխարհս եկի...»: Ընդօրինակել է Զաքարիա գրիշը Կաֆայում 1623 թվականին: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 8100 (1296), թ. 157բ—158ա. «Ողը վասն անցաւոր աշխարհի վերայ և մարդու անգոն մնալուն:— Է՛ր չես երթար ի միտա ի վար...»: Ընդօրինակված է 1784 թվականին: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 8368 (599), թ. 85ա—86բ. «Ողը վասն նոզոյ և մարմենոյ:— Յառաջն որ յաշխարհս եկի...»: Ընդօրինակված է 1556 թվականին Կոստանդնուպոլիսում: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 8463 (850), թ. 143ա—բ. անխորագիր: «Յառաջն որ աշխարհս եկի...»: Ընդօրինակել է տիբացու Հակոբը 1707 թվականին: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 8605, թ. 119բ—120բ. «Տաղ վասն նոզոյ և մարմենոյ:— Յառաջն որ աշխարհս եկի...»: Ընդօրինակված է 1676 թվականին: (Դիվան, տաղ ԽԶ):

№ 8968 (599), թ. 78բ—79բ. «Տաղ գեղեցիկ:— Իմ սիրու, վատին մի՛ լսեր...»: Ընդօրինակված է Կոստանդնուպոլիսում 1556 թվականին: (Դիվան, տաղ ԻԳ):

Նույն ձեռագրում, թ. 85ա—86բ. «Ողը վասն նոզոյ և մարմենոյ:— Յառաջն որ յաշխարհս եկի...»: (Դիվան, տաղ ԽԶ):

Նույն ձեռագրում, թ. 256բ—257բ. «Տաղ Ֆրիկ ասացեալ:— Է՛ր չես երթար ի միտ ի վայր...»: (Դիվան, տաղ ԽԵ):

## (ՖՐԻԿԻ «ԹԻՎԱՆ»Ի ՄԵԶ ԶՄՏԱԾ ՏԱՂԸ\*)

Կամիմ ընդ ձեղ բան մի խօսել անցաւորիս մեղաց վերայ,  
Ով որ լըսէ յօժար սըրառվ, թող իմանայ՝ ո՞ւտի կու գայ,  
Ուղիղ սըրառվ ականջ դնէ ու զիր հոգոյն դուռըն բանայ,  
5 Փառաւորի ինքն իր մըտին՝ ականջվընուն անուշ կու գայ,

Օրհնեալ անուն ըՍտեղծողին՝ որ հոգուն հանց շնորհք կու տայ,  
Որ կու կարենք հանց բան տան, որ իմաստնոցըն դոր կու գայ,  
Փա՛ռք Աստուծոյ անմահ բանին, որ ըպմտացըն լոյս կու տայ,  
Որ մենք պատմենք բանն առակաց աստընուորիս թէ ոնց կու գայ,

10 Շով մ'էր բըխել անցաւորէս, չորեքանկիւն բաժնել է նա,  
Չորսըն ի չորս տեղ զարդարել և չորս անուն առել է նա:  
Չորսէն ի չորս ուսիկ ելել, աստընուորիս բանին վըկայ,  
94թ Չորսըն չորս ցեղ է զարդարել, // ամէն ծաղկանց նըման է նա:

Մէկն էր դեղին, մէկն էր կարմիր, հետ մէկ մէկի հասել է նա.  
Մէկն էր կապուտ, մէկն էր կանանց, հանց որ իրեն նըման վըկայ:  
Չորսք դիհաց մէկտեղ եկել՝ աստընուորիս բանին վըկայ՝  
Բարձր, ահաւոր ծառ մ'է ելեր, ամէն բանիւ մեղ պիտենալ:

Երկուտասան ճիւղք է ձըգեր՝ համբով տերև տըւած նոցա,  
Ամէն ճըղին՝ եռառն տերև, որ արարածք հանգի ի նա:  
20 Երկու մըկունք առաջ ընկած հանց կու դատին ծառին վերայ,  
Մէկըն էր սե, մէկն ըսպիտակ, մեղըր բունին ճըղին վերայ:

Վերեն զմեղըր կու բանին, տակըն կըստեն, որ կոտրի նա,  
Հզբաղցրութիւնն անկից ցըցնեն, որ կոտրիլըն մարդ շիմանայ:  
Վիշապ մի մեծ և ահագին բուն էր դըրել ճըղին վերայ,  
25 Բերանն ի բաց ու կու հայէր, մարդ որ ընկնէր՝ կու տայր զնաւ:

\* Բնագիրը սիալաշատ ընդօրինակություն է, ուստի և հարկ համարեցինք որոշ միջամտություններ անել՝ սիալաները տեղափոխելով ներքնի ծանոթագրությունների մեջ

2 ընդ ձեղ շից

16 զիմաց փոխ. դիհաց

3 իմանայ թէ

16 ասպընորիս

4 դուռն

17 Տառիկու փոխ. Երկուտասան

6 հողուն փոխ. հոգուն

18 ձըրէր

8 մըտացն

19 ճըղի

9 ասղընուորիս

19 ի շից

10 Շօվ

19 նայ

10 բխել

21 մէկն

10 նայ

21 մէկըն

11 Չորսն

22 նայ

11 զարդարել փոխ. զարդարել

23 Զբաղցրութիւն

11 նայ

23 ցըցնեն

12 վասնուորիս

23 կոտրին

12 վկայ

24 դրել

13 նայ

25 դնայ

14 նայ

Մարդ մի տեսաւ գքաղցըր, մեղրը, խիստ ցանկացաւ ուտել զնա,  
Մըտիկ շարաւ զնա կըոծելոյն մկներն զժիւղքն՝ որ կոխել նա,  
Յանկարծակի ճիւղըն հատաւ, մարդըն անկաւ բոմին վերայ,  
Վիշապն վազեց ի դուս բռնէն, բերանն երաց, կու ետ զնա:

30 Արդ, Ֆրիկ, ըզմիտքըդ բա՛ց ու իմացի՛ր զառակս որ կայ,  
Տե՛ս ու քննէ՛ թէ զի՞նչ է ծովն ու զի՞նչ է շորս անկիւնն նըմա:  
Կամ զի՞նչ է շորս ուոզն եկել աստընուորիս բանին վերայ,  
Կամ զի՞նչ է ցեղ, որ զարդարել՝ ամէն ծաղկանց նըման է նա:

Կամ զի՞նչ էր այն շորս ցեղ վըկայն՝ ի սուս աստընուորիս վերայ,  
35 Մէկտեղ եկել են վըկայեն՝ թէ աստընուորս հանց կու գընայ:  
Կամ զի՞նչ է՝ բարձր, ահաւոր ծառ մի կայ՝ ճըղերն ի հետ նորա,  
Կամ տերևնին, որ համարով երեսնական տըված նոցա:

Կամ զի՞նչ էր այն երկու մըկունքն, որ հանց դատին ծառին վերայ,  
40 Կամ զի՞նչ է այն քաղցըր մեղրը, կամ ի՞նչ՝ կըոծելն, որ կոտրի նա:  
Կամ ի՞նչ այն մեծ շար վիշապըն, որ բուն էր դեկ քեօքին վերայ,  
Կամ ի՞նչ հայի՛ որ կու մընայր՝ մարդըն ընկնիլն՝ կու տայր զնա:

Է՛, Ֆըրիկ, բա՛ց ըզբերանըդ ու հասկըցուր զառակս որ կայ,  
Ճծովդդ ի վեր բե՛ր ու պատմէ՛, զբանքդ յայտնէ՛ ինչ ցեղ որ կայ:  
45 Մովըն է՝ աստընուորըս ու զարարածըս որ լինենայ.  
Գորս անկիւնն է՝ շորս քընճերն, որ անունով յիշուփն նոքա:

Մէկն արևելք, մէկն արևմուտք, մէկըն հարաւ, մէկըն հիւախ,  
95ա Զորսէն շորս ուոքն որ եւանեն՝ շորս տարերքըն են որ կայ:  
/Մէկըն դեղին, մէկըն կարմիր՝ հուրըն, քամին, որ կու շնչայ,  
Մէկն որ կապուտ, մէկըն՝ կանանչ շուրն ու հողըն որ լինենայ:

27 զնա չի՞	39 նայ
27 նայ	40 ինչ էր
28 Անկարծակի	40 զնայ բուն փոխ. բուն էր
29 Վիշապըն	41 մնայր
29 ի դուս չի՞	41 բնինիլըն
29 ի բաց փլս. երաց	41 զնայ
29 երես փոխ. ետ	42 զրերանտ
29 զնայ	43 Ճծովտ
30 զմիաբա	43 զրանտ այտնէ և պատմէ
30 զառակըս	44 Մովն է
31 նմայ	44 զարարածս
32 բանին չի՞	45 նորայ
33 նայ	45 յիշին
35 աստընուորըս	46 յարևելք
35 գընայն	46 յարևմուտք
36 մեր ճըղերն	47 գուռն փոխ. ուոքն
36 նորայ	47 եւանէ
37 Բարձր ահաւոր կրկնված տողի սկզբուն	47 են չի՞
37 եւեսնական	
38 հանց չի՞	
39 քաղցըր ու	

50 Չորեք դիմաց որ վըկայել, շորս եղանակս է որ կու գայ՝  
Մէկըն աշուն, մէկըն գարուն, ձրմեռն, ամառն որ կու լինայ:  
Բարձր, ահաւոր ծառն որ կանգնել՝ բոլոր տարին է մեր վերայ,  
Երկուտասան ճիւղքն որ ձըգել՝ իւր ամիսին է՝ ի հետ նորա:

Համբով տերեւ տրված նոցա՝ համբով օրերս որ կու գընայ,  
55 Ամէն ճըղքի եռսուն տերեւ՝ ամսոց օրերքն՝ որ կու լինայ:  
Մըկունքըն սև ու ըսպիտակ՝ տիմ ու գիշերն՝ որ կու գընայ,  
Մեղրը քաղցրով՝ է՝ սուս կենցաղս, տակի կըստելն՝ որ կոտրի նա:

Վիշապըն միծ և ահագին՝ մահու օրերս է, որ կու գայ,  
Թունն որ դըրել վերայ տակին, գերեզմաններս, որ տի լինայ:  
60 Մարդն որ տեսաւ ըգբաղցրութիւն, խիստ ցանկացաւ ուսել ըզնա.  
Սուս՝ կենցաղս է, որ կու խարէ, չիմացնելըն՝ թէ մահ կու գայ:

Հանկարծակի ճիւղքըն հատաւ, մարդըն անկաւ բընին վերայ.  
Այն խարիլն է յաղամորդոյս, որ սատանի բաժին կ'ըլլայ:  
Վիշապըն էր վազէր ի դուրս, բերանն երաց, կըլաւ ըզնա,  
65 Այն սատանայ է դըժոխոց, որ անդադար ըզմել կ'որսալ:

Մըսկի'ն Ֆըրիկ ողորմելի, կանգնէ՛ ոտաց, աղօթք արա՛,  
Երեսըդ դի՛ր վերայ մոխրին ու անդադար ասա՛ մեղայ:  
Միրտոդ ամուր պահէ՛ մեղաց՝ աստընուրիս չի ցանկանայ,  
Որ քեզ հասնի Տէրն ու օգնէ ու չի թողու ըգբեզ որսայ:

70 Փա՛ռք փառաց թագաւորին, որ իմաստնոց գուոըն բանայ:  
Մէք գոհանամք ողորմածէն, թէ մեղաւորն ոնց կու գընայ:  
Որ զանարժանս արժանացոյց և զմեզ փրկել խիստ կու ջանայ,  
Փա՛ռք իւր անհաս մարդեղութեանն, յափտենից, յայժմ, ՚ւ յարակայ:

(Հայկական ՍՍԾ Պետական մատենադարանի ձեռագիր № 2939)

- 51 լինի
- 52 կանքնել
- 53 ամիսն
- 53 ի շի՞մ
- 53 նորայ
- 56 մըկումբն
- 57 նալ
- 60 զբաղձրութիւն
- 60 զնայ
- 61 վիկանեցելն
- 61 կու քայ
- 63 կըլայ

- 64 Վիշապն
- 64 ի բաց փոխ. երաց
- 64 կըլաւ
- 64 զնայ
- 66 կանքնէ
- 66 արա՛լ
- 67 երեստ
- 67 ասա՛լ
- 68 Միրտըտ
- 69 թողուր
- 72 զանարժանըս
- 73 յայժմ արակայ

